ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/337

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Ջիարջի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20420-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 06.12.2021թ.-ի թիվ 09/3084 գրության հիման վրա, 13.12.2021թ.-ին «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 13.12.2021թ.-ին:

13.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/337 համարի ծածկագիրը:

17.12.2021թ.-ին և 30.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.12.2021թ.-ին:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.12.2021թ.-ի թիվ 09/3084 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««2021 թվականի նոյեմբերի 12-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 24-ի 2-րդ նիստի 6-րդ կետով «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

արձանագրված անհամապատասխանությունները Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին նոյեմբերի 25-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունը կատարել է որոշակի շտկումներ, սակայն շտկման արդյունքում ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժվել է «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության հայտով ներկայացված 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 40-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինները՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«ՋիԱրՋի» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲ<» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի խնդրահարույց չափաբաժինների գնումների պլանում ներառված լինելու փաստն ապացուցող քաղվածքները, հրավերի տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքները /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am և www.eauction.armeps.am կայքերում/, «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված սկզբնական և շտկված հայտերի արտատպումները էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգից, ընթացակարգերի արձանագրությունների պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.12.2021թ.-ի գրությամբ դիմել է «Ջիարջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20420-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով բանավոր դիրքորոշում նախաձեռնված ընթացակարգի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ:

4. <u>ՍՑ-LO-2021/337 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով 12.11.2021թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ջիարջի» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.11.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հայտի «Դիմում-հայտարարությունը» կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես, 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չպետք է լրացվեր, բացակայում է ռուսերեն լեզվով անվանումը և բանկային հաշվեհամարը, իսկ էլեկտրոնային փոստի հասցեն

ավելորդ է, քանի որ հրավերով նման պահանջ նախատեսված չէ: Ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ամբողջական տարբերակը: Թիվ 4-րդ. 7-րդ. 8-րդ, 9-րդ և 40-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է հստակ նշել ապրանքային նշանը և յուրաքանչյուրին համապատասխան արտադրողի անվանումի (գրանցված): Թիվ 5-րդ, 10-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների համար առաջարկվող «արտադրողի անվանումը» դաշտում նշվածներից որևէ մեկը ՀՀ պետական գրանցամատյանում առկա չէ: Անհրաժեշտ է հստակ նշել վերջիններիս ապրանքային նշանները և յուրաքանչյուրի համար նշել համապատասխան արտադրողի անվանումը (գրանցված): Թիվ 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների տեխեիկական բնութագրերը թերի են:

v. Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ և հրավերի 8.11-րդ կետերով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ջիարջի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 03.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր անհամապատասխանությունների շտկում թիվ 4-րդ, 5-րդ, 7 րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 40-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով: Սակայն, գնահատող հանձնաժողովի կողմից վերոնշյալ բոլոր չափաբաժինների անհամապատասխանությունների շտկումները գնահատվել են անբավարար:

vii. Արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդուներով «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 40-րդ, 43-րդ և 44-րդ չաւիաբաժինները՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով: Մասնավորապես.

- Թիվ 4-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ցեֆեպիմ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան», «Բելմեդ», «Կրասֆարմա», «Բիոսինտեզ», «Դեկո» և «Սանջիվանի» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

- Թիվ 5-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ֆամոտիդին Կվամատել» ապյանքային նշան և դրան համապատասխանող «Բրինցալով», «Ֆերմենտ», «Կուրսկայա» և «Գեդեոն Ռիխտեր» արտաղրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

- Թիվ 7-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Մետոկլոպրամիդ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան», «Նովոսիբ Խիմֆարմ», «Բիոհիմիկ» «Սոտոքս», «Էլլարա» և «Վելֆարմ» արտաղրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

- Թիվ 8-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Նովոկային» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Երևանի քիմիադեղագործական ֆիրմա», «Ջդորովյե», «Դարնիցա», «Դալքիմ», «էսկոմ», «Արմավիրսկայա», «Օրգանիկա» և «Սլավյանսկայա ապտեկա» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

- Թիվ 9-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դեքսամետազոն» ւսպրանքային նշան և դրան համապատասխանող «ԿՌԿԱ», «Սիզեն Ֆարմասյրստիկալ», «Լեկխիմ Խարկով», «Արփիմեդ», «ՖարմաՏեք» և «Բելմեդ» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

- Թիվ 10-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ամիկացին, ամիկատոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Սինթեզ», «Կրասֆարմ» և «Սեդոքեմի» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը: Բացի այդ «Սինթեզ» և «Կրասֆարմ» արտադրողի անվանումները բացակայում են նշված ռեեստրում, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված «Ամիկացին, ամիկատոն» ապրանքային նշանը չի համապատասխանում ռեեստրում «Մեղոքեմի» արտադրողին համապատասխանող «Ամիկատոն 500մգ/2մլ» ապրանքային նշանին:

- Թիվ 40-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Կալցիոմի գլյուկոնատ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Դարնիցա», «Արմավիրսկայա», «Դլպիիմ», «ՍԿՖԿ», «Գրոաեքս», «էլլարա» և «էսկոմ» արտադրողի

անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը: Բացի այդ, «Արմավիրսկայա», «Դալիիմ», «ՍԿՖԿ», «Գրոտեքս», «Էլլարա» և «Էսկոմ» արտադրողի անվանումները բացակայում են նշված ռեեստրում, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված «Կալցիոմի գլյուկոնատ» ապրանքային նշանը չի համապատասխանում ռեեստրում «Դարնիցա», արտադրողին համապատասխանող «Կալցիոմի գլյուկոնատ Դարնիցա (կայունացված)» ապրանքային նշանին:

- Թիվ 43-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դիկլոֆենակ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Լիկվոր», «Մոսկովսկիյ էնդոկրիննիյ», «Սինթեզ» և «Ռոմֆարմ» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղք ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը: Բացի այդ, «Մոսկովսկիյ էնդոկրիննիյ», «Սինթեզ» և «Ռոմֆարմ» արտադրողի անվանումները բացակայում են նշված ռեեստրում, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված «Դիկլոֆենակ» ապրանքային նշանը չի համապատասխանում ռեեստրում «Լիկվոր» արտադրողին համապատասխանող «Դիկլոֆենակ օֆտալմիկ» ապրանքային նշանին:

- Թիվ 44-րդ չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Էտամգիյատ Դիցինոլ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բիոսիեթեզ», «Բրինցալով», «ՍԿՖԿ» և «Լեկ» արտադրողի անվանումներ, սակայն հրավերով սահմանվել էր «դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20420-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի՝

- «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

- «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով 12.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով 12.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հայտի «Դիմում-հայտարարությունը» կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես, 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չպետք է լրացվեր, բացակայում է ռուսերեն լեզվով անվանումը և բանկային հաշվեհամարը, իսկ էլեկտրոնային փոստի հասցեն ավելորդ է, քանի որ հրավերով նման պահանջ նախատեսված չէ: Ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ամբողջական տարբերակը: Թիվ 4-րդ. 7-րդ. 8-րդ, 9-րդ և 40-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է հստակ նշել ապրանքային նշանը և յուրաքանչյուրին համապատասխան արտադրողի անվանումի (գրանցված): Թիվ 5-րդ, 10-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների համար առաջարկվող «արտադրողի անվանումը» դաշտում նշվածներից որևէ մեկը ՀՀ պետական գրանցամատյանում առկա չէ: Անհրաժեշտ է հստակ նշել վերջիններիս ապրանքային

նշանները և յուրաքանչյուրի համար նշել համապատասխան արտադրողի անվանումը (գրանցված): Թիվ 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների տեխեիկական բնութագրերը թերի են, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ջիարջի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 03.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր անհամապատասխանությունների շտկում թիվ 4-րդ, 5-րդ, 7 րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 40-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով, սակայն վերոնշյալ բոլոր չափաբաժինների անհամապատասխանությունների շտկումները գնահատվել են անբավարար, ինչով պայմանավորած որոշում է կայացվել մերժել «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից թիվ 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 40-րդ, 43-րդ և 44-րդ չաւիաբաժիններով ներկայացված հայտը՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի

որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20420-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/337 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ջիարջի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**